

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՆՔԵՐ

ՆԱՐԵԿԱՅ ՎԱՆՔ

Նարեկայ Վանքը կը գտնուէր Վանայ լիճին հարաւային կողմը, Ռէտունեաց գաւառի համանուն գիւղին գրեթէ կեդրոնը, փոքրիկ բլրակի մը վրայ: Ասողիկի համաձայն հիմնուած էր Ժ. Դարուն — մօտաւորապէս 935ին — և կը փայլէր գեղազարդ պաշտօնապայծառ երգեցողովք և զրակոն գիտողօքը. — Դիրք Գ., Դ. է., էջ 174:

ՌԱՋԻ ԵՐԿԱՆ ԵԿԻՂԵՑԻ, մին նուիրուած Ս. Սանդուխտի, որուն նշխարները կը պարունակէր, և միւսը՝ Ս. Աստուածածնի:

Նարեկայ Վանքը աւելի նշանաւոր եղած է իբրեւ ուխտատեղի քան իբրեւ մշակոյթի վառարան, ի բաց առեալ սկզբնական շատ փայլուն բայց կարճատեւ շրջանը: Վանայայրերէն յիշուած են հետեւեալները:

Ա. — Անանիոս Վրդ. Նարեկացի, 935? - 974?, հիմնադիր և առաջին վանահայր Նարեկայ Վանքի, նշանաւոր վարդապետ, և ուսուցիչ Գրիգոր Նարեկացիի. — Աղգապատում, յօդ. 791:

Բ. — Յովնանէս Վրդ. Նարեկացի, 974? - 1005?, որդի Յուրով Անձեացիի (+ 962?), և աշակերտ Անանիա Նարեկացիի. — Աղգապատում, էջ 1144, 1146, Տաշեան, Յուզակ Ձեռ. Վիեննայի, էջ 77-8:

Այս միջոցին Նարեկայ Վանքին մէջ մեծ համբաւ կը հասնէր Յովհաննէսի կրտսեր եղբայրը Գրիգոր Նարեկացի (951-1003), իբրեւ սրբական և հրաշագործ վանական և հզօր բանաստեղծ: Իր գլխաւոր երկերն են,

1. — Մեկնութիւն նրգոց նրգոյն Սողոմոնի, գրուած 977ին, Անձեացեաց Դուրգէն թագաւորին յանձնարարութեամբ:

2. — Պատմութիւն Ապարանից Ս. Խաչին գրուած 983ին, և ընծայուած Մովսէս Ստեփանոս Եպիսկոպոսին:

3. — Աղօթագիրք - Նարեկ — գրուած 1002ին, գործակցութեամբ իր եղբոր Յովհաննէսի. — Հմմտ. Աղգապատում, յօդ. 813:

Երկարատեւ լուսթիւնէ մը ետք Ժ. Դարու սկիզբները կը տեսնենք Սեփանոս Գրիշը, որ Նարեկ գիւղին մէջ կ'օրինակէ

1. — Աւետարան, 1415ին. — Բարսեղ զարեան, Աղուանից երկիր, էջ 247:

2. — Աւետարան, 1419ին, Տիկին Շնորհաւորի համար. — Լալայեան, Յուզակ Ձեռ. Վասպուրականի, Թ. 145:

Եւ Աստուածասուր կրօնաւոր գրիշը, որ 1417ին, Նարեկայ Վանքին մէջ, կը ձեռնարկէ Գրիգոր Տաթեացիի Քարոզագրին ընդօրինակութեան. — Փիրղալէմեան, Նօտարք, Թ. 51, էջ 53:

Աւելի քան մէկ ու կէս դար կ'անցնի Նորէն և ապա կը հանգրվանէ Գրիգոր Եպիսկոպոսին, — գրչութեան արուեստը սորված Արսէն Կրօնաւորէն — որ 1574ին կ'օրինակէ մէկ Աւետարան տանուէր Դաւթի համար. — Հ. Հ. Ոսկեան, Վասպուրականի Վանքեր, Ա. էջ 197: S. Der Nersessian, A Catalogue of the Arm. Manuscripts, Dublin, 1958, p. 71:

Գ. — Միլնաս Վրդ. Վափանցի, 1705-7, նորոգած է Վանքը. — Սրուանձտեանց, Մանանայ, էջ 361: Ոսկեան, Ա. էջ 198-9:

Դ. — Յովնանէս Վանահայր, 1707. — Ոսկեան, Ա. էջ 194:

Ե. — Բարսեղ Վարդապետ, 1787, կը շինէ ժամատուն և դարպաս. — Ե. Լալայեան, Վասպուրական, Նշանաւոր Վանքեր, էջ 24: Ոսկեան, Ա. էջ 199:

Ձ. — Յարութիւն Վրդ. Տարօնցի, 1812, կառուցած է գանգակատուն մը. — Լալայեան, Վասպուրական, Նշանաւոր Վանքեր, էջ 25: Ոսկեան, Ա. էջ 193, 199:

Նոյն տարին Աղթամարի Յարութիւն Կաթողիկոսը կը կառուցանէ եկեղեցւոյ գմբէթը. — Լալայեան, Վասպ. Նշանաւոր Վանքեր, էջ 22, 25:

Դարձեալ գմբէթները կը նորոգուին 1843ին. — Ոսկեան, Ա. էջ 193:

Ե. — Մկրտիչ Վարդապետ, + 1856. — Նօտարք, էջ 226:

Ը. — Յովսէփ Վրդ. Հիլանցի, 1856-66, Ս. Գրիգոր Նարեկացիի գերեզմանին վրայ մարմարոնէ խաչքար մը կը կանգնէ հանգրվանք արձանագրութեամբ. — Ե. Լալայեան, Վասպ. Նշանաւոր Վանքեր, էջ 24:

Իր վանահայրութեան շրջանին, 1864

Սեպտ. 10ին, թիմական ժողով մը կը գումարուի, որ պաշտօնական կ'ընէ Աղթամարի Պետրոս Կաթողիկոսը և անոր տեղ կ'ընտրէ իսապետուր Եպիսկոպոսը. — Իգմիրլիան, Հայրապետութիւն Հայ. Ուր. Ս. Եկեղեցւոյ, 1881, էջ 1007:

Ժ. — Ելիսե վարդապետ, 1896ին Ջարդարուն ընթացքին կը սպաննուի Գաւառի բռնապետ քուրտ Գուլիսան Բէկի մարդոց կողմէ և Վանքը կը թաւառուի:

Ժ. — Յովնանեան վրդ. Յակոբեան, 1901. — Ընդարձակ Օրացոյց, 1901, էջ 411:

ԱՊԱՐԱՆԻՑ Ս. ԽԱՉ ՎԱՆՔ

Ապարանից Ս. Խաչ Վանքը կը գտնուէր Մոկաց սելթարչի Կարաւային կողմը, Մամրտանք գաւառի Ողկի և Ապարանք գիւղերուն մօտ: Հին եկեղեցին կը կոչուէր Ս. Կարապետ: Վանքը պատմութեան հորիզոնին վրայ նշանաւոր կը դառնայ Ժ. Գաւառուն. — Հմտ. Հ. Հ. Ոսկեան, Վասպուրականի Վանքերը, Գ, էջ 821-838:

Ապարանից Վանքի առաջնորդներէն և գրական մշակներէն սակաւաթիւն ածուցներ միայն ծանօթ են մեզի. կը ներկայացնենք ստորեւ ժամանակագրական կարգով և ամփոփ զիժերով:

Գուրիք Եպս. Մոկաց, ձեռնադրուած Անանիա Մոկացի Կաթողիկոսէն (541-965), կը հիմնէ Ապարանից Վանքը, կը համբաւուի սրբապետ Կեանքով, խոր ծերութեամբ կը ինքէ իր մահանացուն և կը թաղուի Ս. Կարապետ եկեղեցիին մէջ:

Սեփանոս Եպս. Մոկացի, եղբոր թոռ և յաջորդ Գաւառի Եպիսկոպոսի, կը շինէ նախ Ս. Ստեփանոս Նախավայրի եկեղեցին, և ապա Ս. Աստուածածնին հոյակապ տաճարը (983), նմանութեամբ Աղթամարի Ս. Խաչին: Կոստանդնուպոլսէն նուէր ստացած էր թանկագին խաչ մը, Կենայ Փայտի մասունքով, որուն ի պատիւ գրած պիտի ըլլայ «Սրբութիւն Սրբոց» սկզբնաւորութեամբ և Ստեփանոս ծայրանունով գեղեցիկ շարականը: Այդ առթիւ է որ Գրիգոր Նարե-

կացին ալ բանաստեղծական ոճով գրած է Ապարանից Խաչին պատմութիւնը և Ս. Խաչի ներքոյը, անոնց կցելով Ս. Կոյսին հաշուապ ներքոյը. — Հրատ. Մատենադարան, Վիեննայ, 1840, էջ 371-423, գրութիւնք, 1840, էջ 371-423:

Վարդան Արեւիկապետ 1554 թուին կը յիշուի, իբրև առաջնորդ, Իգմիրլիան Սեփանոսի կողմէ, որ քսուրք գրքը մը կ'օրինակէ անդ. — Ոսկեան, Գ., էջ 829:

Տէր Խումայ Տոբնիայ Արեւիկապետ, 1580-84. — Ս. Լաւայան, Յուլիան Զեռ, Վասպուրականի, էջ 691, թ. 289:

Իր առաջնորդութեան շրջանին Կիրակոս Կրօնաւոր օրինակած է Երկու Աւետարաններ, մին 1580ին. Խաչատուր Կրօնաւոր համար. (Ս. Լաւայան, Յուլիան, էջ 691), իսկ միւրը 1584ին. — Ոսկեան, Գ., էջ 831:

Սյո Ժամանակ Ապարանից Ս. Խաչին միաբաններէն էր Սիմէոն Վրդ. Ապարանցի (1550-1615). ծանօթ տաղասաց, որ տաղաշարած է Ապարանից Ս. Նշանին պատմութիւնը, 1590ին. — Հրատ. Վաղարշապատ, էջ 129-141:

Սիմէոն Եպս. Ապարանցի (փոքր), 1611-64, որդի Կարապետի և Մովսէսի, աշակերտ Կաթողից Կարապետ Վարդապետի (+ 1637). Սա կը հանդիսանայ շինարար առաջնորդ մը. հեղուհէ կը շինէ կամարակապ պանդոկ մը ուխտատարց համար (1651), նոյնպէս կամարակապ սղարի մը (1660), և Ապարանից գիւղի եկեղեցին (1664). — Աղաւաղներ, Միաբանք, էջ 472-3: Ոսկեան, Գ., էջ 827:

Քանի մը տարի ետքը, 1673ին, Վարդան Սեդէ, որդի քաջ քարտուղար Անտիոսի, կ'օրինակէ Աւետարան մը. — Լաւայան, Յուլիան, էջ 944:

Դար մը ետքը, 1762 թուին, կը պատահի հրաշալի երեւոյթ մը: Ըստ յիշատակագիր Յովհաննէս զըլի, սերեւեցաւ հրաշք մը: Ապարանից Սուրբ Խաչի Վանքը, որ Նոր Կիրակին լոյսն յայտնապէս իջաւ ի վերայ սուրբ Խաչին մինչև Համարաբուս, գիշեր և ցերեկ կայր ի վերայ սուրբ Խաչին. — Ոսկեան, Գ., էջ 837:

Ն. ԵՊՍ. ԵՈՒԼԿԱՆ